Արտասահմանցի ուսանողների խմբակային ճանապարհորդություններ Գերմանիա

Նպատակը

≡ Գերմանական ակադեմիական փոխանակության ծառայությունն օժանդակում է արտասահմանցի ուսանողներին դասախոսների ղեկավարությամբ ուսումնական ճանապարհորդություններ և ուսումնական պրակտիկաներ անցկացնել Գերմանիայում:

Օժանդակության նպատակը՝

- Ծրագրի նպատակն է հնարավորություն տալ արտասահմանցի ուսանողներին ճանապարհորդությունների միջոցով Գերմանիայի վերաբերյալ գիտելիքներ ստանալու (ուսումնական ճանապարհորդություններ), մասնագիտական կապերի հաստատում (մասնագիտական կուրսերի այցելություն, սեմինարներ) պրակտիկայի կազմակերպում և անցկացում բարձրագույն ուսումնական հաստատություններում (ուսումնական պրակտիկաներ):
- Միաժամանակ ծրագիրը նաև ծառայում է գերմանական և հայրենական բուհերի միջև գոյություն ունեցող կապերի պահպանմանն ու գերմանացի և արտասահմանցի գիտնականների ու ուսանողների միջև նոր ծանոթությունների հաստատմանը:
- Այցելությունների, շրջագայությունների և տեղեկատվական զրույցների օգնությամբ պատկերացում կազմելու Գերմանիայի գիտական, տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի մասին:

≡ Ուսումնական պրակտիկաների համար նախընտրելի է երկկողմանի այցելություն, բայց հնարավոր է նաև օժանդակություն միայն միակողմանի այցելությունների համար:

≡ Մշակութային միջոցառումների օժանդակություն (օր.համերգային ճամփորդություններ), եթե կա մասնագիտական ուղղվածություն և համալսարանի կողմից նախապատվություն:

≡ Յուրաքանչյուր ոլորտ կամ հաստատություն կարող է տարեկան միայն մեկ անգամ հայցադիմում ներկայացնել:

Տևողությունը

≡ Ուսումնական Ճանապարհորդությունները և ուսումնական պրակտիկաները պետք է տևեն ոչ պակաս, քան 7, և ոչ ավել, քան 12 օր, չնայած որ Ճանապարհորդությունները կարող են նաև ավելի երկար տևել :

Կրթաթոշակային վճարումներ

≡ DAAD¬ն ստանձնում է ճանապարհածախսը Գերմանիայի տարածքում, ինչպես նաև DAAD¬ն խմբի համար կնքում է առողջապահական ապահովագրություն, ապահովագրում է դժբախտ պատահարներից և պատճառած վնասի համար անձնական պատասխանատվություն կրելուց:
≡ DAAD¬ն ոչ մի դեպքում չի կարող ստանձնել միջազգային ճանապարհածախսերը:

≡ ***1. Ուսումնական ճանապարհորդություններ***

DAAD¬ն հոգում է ծրագրի կազմակերպման համար։ Հնարավորինս պահպանվում է դիմումի մեջ նշված ծրագիրը, սակայն ընտրող հանձնաժողովի կողմից հնարավոր են նաև կրճատումներ և փոփոխություններ։ Տրամադրվում է նաև ուղեկցորդ¬թարգմանիչ« որը կոորդինացնում է ծրագրի տեխնիկական ընթացքը և աջակցում է խմբին։
Խմբերը սովորաբար տեղավորվում են միջին կարգի հյուրանոցներում կամ երիտասարդական կացարաններում (JugendgՊstehՊuser) երկտեղ կամ եռատեղ սենյակներում։ DAAD¬ն հոգում է խմբի, այդ թվում խմբի ղեկավարի և վարորդի՝ Գերմանիայում մնալու ծախսերը։
DAAD-ն ընտրում է առավել նպատակահարմար փոխադրամիջոցը։ Ավելի հաճախ ընտրվում են ավտոբուսներ՝ ծրագրի առանց թերությունների ընթացքը ապահովելու համար։ Այն խմբերը , որոնք առանց իրենց սեփական ավտոբուսի կհասնեն Գերմանիա, DAAD¬ն կարող է այդ դեպքում Գերմանիայի տարածքում շրջագայելու համար ավտոբուս տրամադրել։ Եթե խումբը շրջագայում է ոչ DAAD¬ի կողմից տրամադրված ավտոբուսով, ապա նախատեսվում է, որ այդ ավտոբուսի մեջ լինի նաև տեղ ուղեկցորդի համար։ DAAD¬ն իր վրա է վերցնում բենզինի համար նախատեսված ծախսերը։

≡ ***2. Ուսումնական պրակտիկաներ***

Պրակտիկանտները բացի Գերմանիայի տարածքում մնալու և ճանապարհորդությունների ֆինանսավորումից ստանում են նաև օրեկան 40 եվրո հավելավճար։

Դիմելու համար անհրաժեշտ նախադրյալները

≡ Դիմել կարող են ցանկացած բուհի երրորդ կիսամյակի ուսանողները՝ բուհի դասախոսներից որևէ մեկի ղեկավարությամբ։ Խումբը պետք է կազմված լինի առնվազն 10 առավելագույնս 15 հոգուց։ Լրացուցիչ կարող է ընդգրկվել նաև որևէ դասախոս՝ որպես ուղեկցող անձ։

Դիմելու համար անհրաժեշտ փաստաթղթերը

≡ Ընդունվում են միայն ժամանակին ներկայացված և ամբողջական հայցադիմումները։ Հայցադիմումների ամբողջական փաթեթը ներառում է՝

1. Դիմումի ձև ներառյալ ֆինանսավորման պլանը և մասնակիցների նախնական ցուցակը։
2. Հիմնավորում Գերմանիայում ուսանողական ճանապարհորդություն անցկացնելու համար ծրագրի նկարագրությունը« ինչպես նաև մանրամասն և ճշգրիտ նկարագրությունը բոլոր այն վայրերի« որոնք խումբը նպատակադրվում է այցելել։ Ընդհանուր նշումներ, ինչպես օրինակ, այցելություններ համալսարաններ և թանգարաններ, բավարար չեն։
3. Ճանապարհորդության անցկացման ժամանակացույց և տեղացույց (աղյուսակաձև)։
4. Ճանապարհորդության համար կատարված նախապատրաստական աշխատանքների նկարագիրը (օր©՝ նախապատրաստական սեմինարներ)
5. Փաստաթուղթ գերմանական համալսարանի (համալսարանների) հետ առկա կապերի մասին (ուսումնական ճանապարհորդություններ) և հայրենական համալսարանների հետ ունեցած կապի մասին (ուսումնական պրակտիկաներ)։

Հայցադիմումների ներկայացում

≡ ***1. Ուսումնական ճանապարհորդություններ***

Դիմումները գերմաներեն կամ անգլերեն լեզվով կարող են ներկայացվել DAAD-ի երևանյան տեղեկատվական կենտրոն, որն այնուհետև այն համապատասխան մեկնաբանություններով փոխանցում է DAAD-ի կենտրոնական գրասենյակ: Դիմումները իրավասու են ներկայցնել հայրենական բուհի դասախոսները: Հայցադիմումները կարող եք նայել հետևյալ ինտերնետային կայքում www.daad.de/de/form (Formular „Studienreise“) bzw. www.daad.de/en/form (Formular „Study Visit“).

Դիմումները ժամկետների համար նախապես խնդրում ենք հարցնել DAAD-ի երևանյան տեղեկատվական կենտրոնից, որպեսզի ապահովել ժամանակին նրանց ներկայացնելը Բոնի գրասենյակ 01.02, 01.05, 01.11:

≡ ***2. Ուսումնական պրակտիկաներ***

≡ Դիմումները իրավասում են ներկայացնել գերմանական բուհի դասախոսները: Դիմումները ներկայացվում են DAAD-ի կենտրոնական գրասենյակ գերմանական բուհի արտասահմանցիների հարցերով վարչության միջոցով: Հետաքրքրվողների համար ներկայացնում ենք ինտերնետ կայքը www.daad.de/de/form (Formular „Studienpraktika“).

≡ Ժամկետները, վայրը և խորհրդատվությունը

≡ Ուսումնական ճանապարհորդությունների և ուսումնական պարակտիկաների համար դիմումները պետք է DAAD ներկայացվեն հետևյալ ժամկետներում

01/11 հաջորդ տարվա մարտի 1-ից սկսվող ճանապարհորդությունների դեպքում
որոշումը DAAD-ի կողմից կկայցվի հունվարի կեսին

01/02 հաջորդ տարվա հունիսի 1-ից սկսվող ճանապարհորդությունների դեպքում
որոշումը DAAD-ի կողմից կկայցվի ապրիլի կեսին

01/05 հաջորդ տարվա սեպտեմբերի 1-ից սկսվող ճանապարհորդությունների դեպքում
որոշումը DAAD-ի կողմից կկայցվի հուլիսի կեսին

≡ **DAAD-ի հասցեն**

DAAD-ի կենտրոնական գրասենյակ
Deutscher Akademischer Austauschdienst Referat 224 Kennedyallee 50 D - 53175 Bonn Zuständige Bearbeiterin: Frau Klein Telefon: 0228/882-370 Fax: 0228/882-447 E-Mail: k.klein@daad.de www.daad.de
Frau Julia Lõlllgen Telefon: 0228/882-328 Fax: 0228/882-447 E-Mail: loellgen@daad.de

≡ Ծրագրի մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ www.daad.de/stipendien ինտերնետային կայքից: